

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	10
5.1. Բյուջեի եկամուտներ.....	10
5.2. Բյուջեի ծախսեր	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք.....	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ և վարկեր.....	14
7. ԱՄՓՈՓՈՒՄ	15

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, 2018-2019թթ., %




2019թ. հոկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 7.1%՝ նախորդ ամսվա նկատմամբ մնալով անփոփոխ: Ընթացիկ զարգացումները ցույց են տալիս, որ բազային էֆեկտի ազդեցությունը պահպանվում է: Այսինքն՝ նախորդ տարվա ցածր բազայի պայմաններում ներկա զարգացումները աճող են լինում:

Ամսական աճը, այսինքն՝ հոկտեմբեր ամսվա աճը նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ, կազմել է 7.7%, որը 0.2 տոկոսային կետով արագացել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ:


Տնտեսական ակտիվության աճը ապահովող ճյուղերը գրեթե չեն փոխվել: Ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը՝ 6.8 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության աճին նպաստել են նաև արդյունաբերության (1.8 տոկոսային կետ), առևտրի (1.1 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-հոկտեմբեր, %¹



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Արդյունաբերության ոլորտի աճը կտրուկ դանդաղել է: 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսի աճը ուներ արագացման միտում, սակայն, հոկտեմբեր ամսին արդյունաբերության աճը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դանդաղել է՝ կազմելով 2.7 տոկոս: Արդյունքում կուտակային աճը՝ հունվար-հոկտեմբեր ամիսների աճը նախորդ

¹ Գյուղատնտեսության ցուցանիշը հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված՝ ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:


տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նույնպես դանդաղել է մոտ 1 տոկոսային կետով՝ կազմելով 8.8 տոկոս:

Արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 6.1 տոկոսային կետ), որի կառուցվածքում աճում են գրեթե բոլոր ենթաճյուղերը: Մասնավորապես, նշանակալի են ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (աճը՝ 47.7%, նպաստումը՝ 2.6 տոկոսային կետ), ծխախոտային արտադրատեսակների արտադրության (աճը՝ 14.7%, նպաստումը՝ 2.1 տոկոսային կետ) և սննդամթերքի արտադրության (աճը՝ 7.2%, նպաստումը՝ 2.1 տոկոսային կետ) աճերը³:

Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով արագացել է նաև հանքագործական արդյունաբերության աճի տեմպը՝ կազմելով 19.5 տոկոս (նախորդ ամսվա 14.8%-ի փոխարեն), որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին 2.8 տոկոսային կետից դարձել է 3.5 տոկոսային կետ: Հանքագործական արդյունաբերության աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մետաղական հանքաքարի արդյունահանման 20.2 տոկոս աճով, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերությանը կազմել է 3.5 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Շինարարության ծավալի աճի տեմպը կայունացել է ցածր մակարդակում:
Հունվար-հոկտեմբեր ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

³ Արդյունաբերության կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հոկտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

նկատմամբ աճել է աննշան՝ 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 4.5 տոկոս, որը բավական ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Ծառայությունների ոլորտը, մնալով տնտեսության ամենաարագ աճող ճյուղը, ցուցաբերում է աճի դանդաղման միտումներ: 2019թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում 2018թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ այս ճյուղն աճել է 15.1 տոկոսով, որը 3.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (18.5%) և 0.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ ամսվա ցուցանիշը:

Ծառայությունների աճի կառուցվածքը շարունակում է մնալ մտահոգիչ: Այս ճյուղի աճին ամենամեծ նպաստում ունեցողը մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտն է, որը հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 5.2 տոկոսային կետով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեության աճը նախորդ ամսվա 17.2 տոկոսից դարձել է 18.3 տոկոս, իսկ նպաստումը 3.7 տոկոսային կետից՝ 3.8 տոկոս, որը պայմանավորված է նաև մեքենաների ներմուծման կտրուկ աճի պայմաններում վարկերի նկատմամբ պահանջարկի աճով: Ծառայությունների աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների մյուս բոլոր

Ենթաճյուղերի աճերը որոնցից նշանակալի է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում» (2.5 տոկոսային կետով) ենթաճյուղի նպաստումը⁴:

Գծապատկեր 6. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-սեպտեմբեր, %⁵




⁴ Ծառայությունների կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հոկտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

⁵ 2019թ. հունվար-հոկտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 7. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Առևտրի ծավալների աճի տեմպը կայունացել է: Հունվար-հոկտեմբեր ամիսներին առևտրի ոլորտի կուտակային աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 8.9 տոկոսով, որը ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

1. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 8. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Արտահանման աճը վերականգնվում է, սակայն աճի տեմպի արագացում չի նկատվում: Ինչպես և ՏԱՅ-ը, արտահանման աճի արագացումը առավելապես կապված է նախորդ տարվա արտահանման ծավալների աճի դանդաղման (ցածր բազայի) հետ: Հունվար-հոկտեմբերին արտահանումն աճել է 7.2 տոկոսով: Կրկին

վերանայվել են արտաքին առևտրի տվյալները, ինչի արդյունքում հունվար-սեպտեմբեր ամիսների արտահանման աճը մեծացել է 0.1 տոկոսային կետով՝ դառնալով 8.0 տոկոս:

Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի արտահանման աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.0, 3.2 և 2.4 տոկոսային կետ: Մինչդեռ «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները նվազել են՝ բացասական նպաստելով արտահանման աճին (համապատասխանաբար -1.5 և -3.0)⁶:

Գծապատկեր 9. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Ներմուծման աճը նույնպես վերականգնվում է: Հունվար-հոկտեմբեր ամիսներին այն աճել է 6.2%-ով, որը, սակայն, շարունակում է բավական ցածր մնալ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Արտաքին առևտրի տվյալների վերանայման հետևանքով հունվար-սեպտեմբեր ամիսների ներմուծման աճը 4.7 տոկոսից դարձել է 5.0 տոկոս:

Ներմուծման ծավալների աճը առավելապես պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման 51.4% աճով, որը ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 4.1 տոկոսային կետով: Մնացած ապրանքախմբերից առավել նշանակալի է «քիմիական արտադրանք» և «հանքահումքային արտադրանք»

⁶ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


ապրանքախմբերի աճերը, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 1.9 և 1.6 տոկոսային կետով:

Միաժամանակ, «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալները շարունակում են նվազել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվելով 13.5 տոկոսով և ընդհանուր ներմուծման ծավալի աճին ունենալով բացասական նպաստում՝ 2.5 տոկոսային կետով:

2. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ



2019թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.9 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.7 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 4.1 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 3.9, 2.0 և 3.8 տոկոս: Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 178,714 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 155,340 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 190,546 դրամ:

Գծապատկեր 10. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., հունվար-հոկտեմբեր, %




3. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 11. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճ, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2019 թվականի հունվար-հոկտեմբերին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 0.3 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.4 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 5.6 տոկոսով:

Գծապատկեր 12. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին ամսական անվանական փոխարժեքը, դրամ



ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ տարեսկզբից ուներ արագ արժևորման միտում, որը, սակայն, կայունացել է վերջին մի քանի ամիսներին՝ շնորհիվ փոխարժեքի շուկային ԿԲ-ի ակտիվ միջամտության: Մասնավորապես, ինչպես նշել է ՀՀ վարչապետը իր ֆեյսբուքյան էջում, այս ամիսների ընթացքում ԿԲ-ն շուկայից գնել է մոտ 521.8 մլն ԱՄՆ դոլար արտարժույթ: Սակայն, պետք է նշել, որ նման միջամտությունը փոխարժեքի շուկային հակասում է լողացող փոխարժեքի քաղաքականությանը:


4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտներն աճում են բարձր տեմպերով, ինչը, սակայն, ունի դանդաղման միտում: 2019 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ընդհանուր եկամուտներն աճել են 19.5 տոկոսով՝ կազմելով 1272.5 մլրդ դրամ, որից հարկերը և տուրքերը աճել են 19.5 տոկոսով՝ կազմելով 1196.8 մլրդ դրամ: Հարկային եկամուտների բարձր աճը առավելապես պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների՝ նախորդ տարվա համեմատությամբ կտրուկ աճով:

5.2. Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



Պետական բյուջեի ծախսերը նույնպես աճում են, սակայն թերակատարման երևույթը պահպանվում է: ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել են 1213.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 10.2%-ով, որը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճով: Ընթացիկ ծախսերն աճել են 9.1 տոկոսով՝ պայմանավորված հիմնականում սոցիալական նպաստների և կենսաթոշակների, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների ձեռքբերման աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում աճել են 25.9 տոկոսով՝ կազմելով 89.0 մլրդ դրամ: Կապիտալ ծախսերի աճը պայմանավորված է միայն ցածր բազայով, այսինքն՝ 2018թ. նույն ժամանակահատվածում կապիտալ ծախսերը զգալիորեն թերակատարվել են: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի տարեկան ճշտված պլանը կազմում է 234.2 մլրդ դրամ: Այսինքն՝ տարվա ավարտին մնացել է երկու ամիս, սակայն իրականացված կապիտալ ծախսերը կազմում են նախատեսվածի ընդամենը 38 տոկոսը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային: 2019թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին բյուջեի հավելուրդը նվազել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ՝ կազմելով 58.6 մլրդ դրամ: Սակայն, հավելուրդի նվազումը պայմանավորված է ոչ թե պետական ծախսերի կատարողականի բարելավմամբ, այլ ԱԱՀ դեբետային գումարների վերադարձով: 2019թ. ճշտված պլանով նախատեսվում է տարեվերջին ունենալ 153.1 մլրդ դրամ պակասուրդ, որն անհրատեսական է փաստացի տվյալների պայմաններում:

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




2019թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,602.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 7.3 տոկոսով: Նախորդ ամսվա (սեպտեմբերի վերջի) նկատմամբ կառավարության պարտքն աճել է 63.8 մլն ԱՄՆ դոլարով (0.1%-ով): Ընդ որում՝ ներքին պարտքն աճել է 36.0 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքը՝ 27.8 մլն դոլարով:

2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ կառավարության ընդհանուր պարտքն աճել է 230.0 մլն դոլարով (3.61%-ով), ներքին պարտքն աճել է 153.5 մլն դոլարով (11.0%-ով), իսկ արտաքին պարտքն աճել է 76.5 մլն ԱՄՆ դոլարով (1.5%-ով): 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ արտաքին պարտքի կշիռը նվազել է մոտ 1.6 տոկոսային կետով:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Չնայած ԿԲ կողմից տոկոսադրույքի նվազեցմանը՝ գնաճը մնում է ԿԲ թիրախից ցածր մակարդակում: Գնաճի նման ցածր տեմպերը ստիպել են ՀՀ կենտրոնական բանկին այս տարվա ընթացքում երկրորդ անգամ՝ սեպտեմբեր ամսին, նվազեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 5.5%, որը, սակայն, թերևս բավարար չի եղել գնաճը թիրախին մոտեցնելու համար: 2019թ. հոկտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 0.9 տոկոս, որը թեև փոքր-ինչ ավելի բարձր է սեպտեմբեր ամսվա ցուցանիշից, սակայն բավական հեռու է ԿԲ թիրախի ստորին սահմանից՝ 2.5 տոկոսից:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %




2019թ. հոկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. հոկտեմբերի նկատմամբ կազմել է 16.9 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը մոտ 4.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 8.2 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 5.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-հոկտեմբեր, %



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 16.9 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 7.1 տոկոսային կետով (աճը՝ 35.0%), ինչպես նաև հիպոթեքային վարկերը (աճը՝ 39.7%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 27.4%)՝ համապատասխանաբար 2.9 և 4.3 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը շարունակել է նվազել է՝ 7.6%-ով՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով -1.2 տոկոսային կետով: Վերջինս պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների կրճատմամբ:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2019թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին արդյունաբերության աճի տեմպը դանդաղել է՝ կապված մշակող արդյունաբերության աճի տեմպի դանդաղման հետ: Այսպես՝ մշակող արդյունաբերության կուտակային աճը հունվար-օգոստոս ամիսների 10.4 տոկոսի փոխարեն՝ հունվար-սեպտեմբերին կազմել է 9.3 տոկոս, իսկ հանքագործական արդյունաբերության աճը, ընդհակառակը, 14.8 տոկոսից դարձել է 19.5 տոկոս:

2. Ներմուծման աճը վերականգնվել է, սակայն շարունակում է բավական ցածր մնալ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ներմուծման

ծավալների աճը առավելապես պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման աճով: Մտահոգիչ է «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալների զգալի կրճատումը, որը ներմուծման ընդհանուր աճին նպաստել է -2.5 տոկոսային կետով: Սա մտահոգիչ ազդակ է, քանի որ այս ապրանքախմբում ընդգրկված են հիմնականում ներդրումային բնույթի ապրանքներ, հետևաբար դրա կրճատումը մատնանշում է ցածր ներդրումային պահանջարկի մասին:

3. Արտահանման աճը նույնպես վերականգնվում է, սակայն աճի տեմպի արագացում չի նկատվում: Արտահանման աճի տեմպը դանդաղել է նախորդ ամսվա նկատմամբ: Պետք է հաշվի առնել, որ ներմուծվող ավտոմեքենաների զգալի մասն արտահանվում է ԵԱՏՄ երկրներ, որը չի գրանցվում և չի արտացոլվում արտահանման վիճակագրությունում:

4. Հարկաբյուջետային քաղաքականության «խնայողական» վարքագիծը դեռևս պահպանվում է: Պետական բյուջեի հավելուրդը նվազել է՝ կազմելով 58.6 մլրդ դրամ, որը, սակայն, պայմանավորված է ոչ թե ծախսերի՝ պլանավորվածին համապատասխան իրականացմամբ, այլ ԱԱՀ-ի դեբետային գումարների վերադարձմամբ:

5. Փոխարժեքի արժևորում թույլ չտալու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը շուկայից գնել է մեծ քանակությամբ՝ մոտ 521.8 մլն ԱՄՆ դոլար արտարժույթ: Այս ծավալով դրամական միջոցների ավելցուկը ձևավորվել է հիմնականում մեքենաների ներմուծման և արտահանման արդյունքում ՀՀ ներհոսող արտարժույթային միջոցներով: Լողացող փոխարժեքի քաղաքականության պայմաններում ԿԲ-ն չպետք է միջամտի շուկայական փոխարժեքի ձևավորմանը, այն էլ այսպիսի մեծ ծավալներով: Սակայն հարկաբյուջետային զսպող քաղաքականության պայմաններում ԿԲ-ի նման վարքագիծը կարելի է արդարացնել պահանջարկի խթանման անհրաժեշտությամբ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**